նած: Օձունի գերեզմանական կոթողները առանց աստիճանների և պլինթների վերայ կանգնած կամարների, ինչպէս և Բրդաձորինը, որ կը տեսնենք քիչ յետոյ, մեծ նմանութիւններ են բերում Ակկայի խաչի, Ruthwell–ի (Պատկ. 44ա և 44բ) և Kewcastle–ի արձանների, ըստ ձևի և մասամբ ըստ բովանդակութեան: Անհաւանական չէ ըստ Ստրժիգովսկիի անցումը այնտեղ Հայաստանի կամ Սիւրիայի վերայով, որ Ը. դարի գործ է համարում:*



Պատկ. 47



Պատկ. 48

---

*Origin of Christian Church Art. Oxford. 1923. p. 239: